Արդ 'ի այն ժամանակի նեղեալ միաբանաց 'ի բռնութենէ այլազգեաց, վասն զերեզմանատանն որ ասի՝ Ճոռնէր. և Արաբացիք կոչեն զայն Ապու Ռոռ և կամ Ապու Սոռ. իսկ Մեսրովպ եպիսկոպոս իրրեւ ոչ կարաց վճարել ինչ յերուսաղէմ, եւ ցածուցանել զցասումն այլազգեաց, հարկադրեալ էջ յեգիպտոս, եւ բազմութեամբ ժողովրդոց յանդիման եղեւ Մէլիք Աշրաֆի Սէյֆի Սուլթանին, առաջի եղեալ նմա զհին հրովարտակս. զուռատպանս եւ զզրկանս ազգին իւրոյ, զոր կրէին յայլազգեաց Երուսաղէմի սակս զերեզմանատանն այնորիկ. ապա խնդրեաց բառնալ զնեղութիւնս նոցա, և թոյլ տալ հանգիստ վարել զկեանս յաշխարհին յայնմիկ, եւ առանց տուգանաց խաղաղութեամբ թաղել զմեռեալս իւրեանց։ Իսկ Սուլթանն կատարեաց զխնդիր նորա տալով հրովարտակ, եւ պատուիրելով մի և մի իւիք բռնանալ 'ի վերայ եպիսկոպոսին եւ միաբանաց նորա, զի վարեսցին ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, ՌՀՕ (1402)։

Արտաքոյ քաղաքին Երուսաղէմի յաջակողմն ճանապարհին Բեթղեհէմի, էր յառաջագոյն վանք և եկեղեցի յանուն Մարկոսի Աւետարանչի, եւ գիւղ փոքրիկ. Մէլիք Ազիզ որդի Սալահատտինի առեալ զայն 'ի ձեռաց քրիստոնէից, ետ այլազգւոյ ուրումն Շէյխ Ահմէտ Ապի Թոռ կոչեցեալ 'ի ժառանգութիւն յորդւոց յորդի. 'ի թուին Հիճրէթի ՕՂԷ (1198)։ Եւ յետ մեռանելոյ նորա թաղեցաւ անդ. և յայնմհետէ կոչեցաւ տեղին իբր ուխտատեղի այլազգեաց. այժմ աւերակ, և երեւի խարխալեալ շինուած ինչ 'ի վերայ գերեզմանի նորին։ Իսկ միաբանք Յունաց ասեն զտեղւոջէն զայնմանէ լինիլ վանք յառաջագոյն 'ի ձեռս Յունաց, ուր թաղեալ է Մոգեստոս երեց տեղապահ Զաքարիա Պատրիարքի գերելոյ 'ի Պարսից, որ և դասեալ են 'ի կարգս տօնելի սրբոց։ Իսկ գերեզմանատեղին Հայոց՝ զոր գրեցաք, է 'ի ձախակողմն սորին դէպ յարեւելս, համարեալ է իբր կալուած (վագֆ), որոյ վասն Հայք կրեցին և կրեն նեղութիւնս մինչեւ ցայսօր։

Ի սատկանալ բռնութեանց հարկահանացն Եգիպտացւոց, որոց գլխաւորն էր Սիւլէյման Իպն Աշրաֆ. զի պահանջէին հարկս նաեւ յուխտաւորաց։ Իսկ Սարգիս եպիս-